

20839

ՀԱՆՈՆԱԳԻՐ

ՇԱՒԱՐՇԱՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՆԱԹՈՒԽ ԳՈՒԷՃԻ

ՄԱՐԶՈՒԱՆ



ՄԱՐԶՈՒԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՆԱԹՈՒԽ

(Յակոբ Մ. Մապեան)

1915

2002

373

C-34


2010

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

«ՇԱՒԱՐՇԱՆ» ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՆԱԹՈՒԻԱ ԳՈՒԷՃԻ

Մ Ա Ր Զ Ո Ւ Ա Ն



I

ԱՆՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. ԱՆՈՒՆԸ.— Ընկերակցութեան ա-
նունը պիտի ըլլայ Շաւարշան:

2. ՆՊԱՏԱԿԸ.— Շաւարշանի նպատակը
պիտի ըլլայ .

Ա. Անաթոլիա Գոլէճի Հայ Ուսանողութեան մէջ
ճիւղութեան և եղբայրակցութեան ոգին զօրա-
ցընել .

Բ. Ազգային դաստիարակութեան գործին սա-
տարել .

Գ. Ուսանողութիւնը վարժեցնել օրինապահու-
թեան, գործակցութեան և ընկերակցական
ձեռնարկներու .

3. ՄԻՋՈՑՆԵՐԸ.— Շաւարշան այս նր-
պատակին իրադրութեան իրր միջոց՝ պիտի
մշակէ հետեւեալ ճիւղերը, Ա. Գրական,
Բ. Մարմնամարզական և Գ. Երաժշտական:

Ա. ԳՐԱԿԱՆ.— Շաւարշան պիտի ունենայ՝ ա.)
Նախաթական կանոնաւոր հաւաքոյթներ, մասնաւոր

օրակարգով, բ.) Մատենադարան մը՝ գրքերով, պար-
բերականներով և լրագրերով, գ.) Թերթ մը՝ (նոր Այգ)
ազգային, գրական և գիտական ուղղութեամբ:

Բ. ՄԱՐԹՆԱՄԱՐԶԱԿԱՆ.— Շաւարշան պիտի ու-
նենայ՝ ա.) Իր կազմակերպեալ մարզանքներն ու այլ-
ևայլ խաղերը, բ.) Դաշտահանդէս- խաղահանդէսներ:

Գ. ԵՐԱԺՇՏԱԳԱՆ.— Շաւարշան պիտի ունենայ՝
ա.) Նուագախումբ, բ.) Երգիչ խումբ և գ.) Նուա-
գահանդէս:

II

ԱՆԴԱՄՆԵՐԸ

4. ԱՆԴԱՄՍԿՑՈՒԹԻԻՆ.— Շաւարշան
պիտի ունենայ երեք զասակարգի անդամ-
ներ:

Ա. ԳՈՐԾՈՆ ԱՆԴԱՄՆԵՐ.— Գործօն անդամ կըր-
նան ըլլալ Անաթոլիա Գոլէճի աշակերտներէն և ու-
սանողներէն անոնք, որ կ'ընդունին Միութեանս նը-
պատակը և կ'ենթարկուին ներկայ Կանոնադրին աը-
րամադրութեանց:

Բ. ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐ.— Օժանդակ անդամ
կրնան ըլլալ Գոլէճի շրջանակէն դուրս անոնք, որ կը
համակրին Միութեանս նպատակին և կ'ընդունին
ներկայ Կանոնադիրը:

Գ. ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ.— Պատուոյ անդամ
կրնան հրաւիրուիլ անոնք, որ Շաւարշանի համակը-
րութիւնը կը գրաւեն և կը համակրին անոր:

5. ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻԻՆ-
ՆԵՐԸ.— Շաւարշանի անդամներու պար-
տականութիւնները հետեւեալ կիրպով կըր-
նան սահմանուիլ: Ա. Առաւաւելն մինչև

1337-77



64861 աւ

Նոյ. 1 (Ը. Ե.) ամեն գործօն անդամ իր տարեկան անդամավճարին (30) կէսը, իսկ ամեն օժանդակ անդամ 10 դահեկան պարտի վճարել: Գործօն անդամներ իրենց վրձարման միւս կէսը պարտին Փետրվ. 1 ին հաստուցանել:

ԾԱՆՈԹ. — Գործօն անդամներու անդամավճարը կը պարունակէ նաև բաժնեգինը թերթին, զոր իւրաքանչիւր գործօն անդամ ձրի պիտի ստանայ:

— Վճարումները երբ որոշեալ ժամանակներուն չեն ըլլար, յապաղման պարագային՝ իւրաքանչիւր օրուան համար 20 փարա տուգանք պիտի առնուի:

— Վարչական ժողովի հաւանութեամբ նիւթապէս անկարող աշակերտներու համար առանձին կարգադրութիւն կ'ըլլայ:

— Ոչ-հայ և կամ ընտանիքի տէր անդամներ կ'արտօնուին պարագաներու համեմատ բացակայիլ:

Բ. Որևէ պատճառաւ Ընկերակցութեանէն հրաժարող կամ հրաժարեցուցուած անդամի մը վճարումը իրեն չվերադարձուիր: Անդամակցողներ, երբ որ ալ ըլլայ իրենց մուտքը, ամբողջ տարեվճարը տալու կը հարկադրուին, և անգամ մը հրաժարելէ վերջ կրկին անդամակցիլ ուզողներ՝ նոր վրձարում ընկու ին:

Գ. Որևէ անդամ պարտաւոր է Շառաւշակի պաշտօնէութեան որոշումներուն և օրինական պահանջներուն հնազանդիլ: Առանց Վարչական ժողովի մասնաւոր ար-

տօնութեան, որևէ թիրացում չարդարա-
նար :

Գ. Անդամակցութենէ քաշուիլ ուզող
մէկը պարտի գրաւոր և պատճառարան-
եայ հրաժարական տալ :

6. ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ. — Անդամներու իրաւասութիւնները
հետեւեայ կերպով կը սահմանուին :

Ա. Այն գործօն անդամը, որուն Հայե-
րէնի ճիւղը երկրորդ կարգէն վեր է, իրա-
ւասութիւնը պիտի ունենայ քուէ տալու և
ընտրուելու :

Բ. Շաւարշանի ամեն անգամ իրաւունք
ունի Մատենադարանի գիրքերը, թերթե-
րը, խազի գործիքները և այլն օրինաւոր
կերպով գործածելու, գրական հաւաքոյթ-
ներու և խազերու մէջ բաժին ունենալու և
կամ Շաւարշանի որևէ մրցումին մասնակ-
ցելու :

Գ. Ամեն անգամ իրաւունք ունի գրա-
ւորապէս որևէ խնդիրի համար բողոք ներ-
կայացնելու Վարչութեան և կամ բացատր-
ութիւն պահանջելու՝ իրեն եղած զրկանքի
մը մասին :

Դ. Օժանդակ անդամները քուէ տալէ և
ընտրուելէ զատ գործօն անդամներու բո-
լոր իրաւասութիւնները պիտի ունենան :

7. Շաւարշանի անդամակցիլ փափաքող-

նիր պէտք է դիմեն Վարչական Ժողովին , որ իրենց թեկնածութիւնը կը ներկայացնէ Ընդհանուր Ժողովին՝ վաւերացուելու համար $\frac{2}{3}$ ի մեծամասնութեամբ : Առանց այս օրինական գործողութեան, օրէէ մէկը անգամ չհամարուիր :

III

ՊԱՇՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Ա. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ. —

Ց. ԹԻԻԼ՝ ԵՒ ՊԱՇՏՈՆԸ. — Վարչական Մարմինը կը բաղկանայ եօթը անդամներէ՝ հետեւեալ պաշտօններով . 1. Նախագահ , 2. Դեր-Նախագահ , 3. Գանձապետ , 4. Ընդհանուր Քարտուղար , 5. Ա. Ատենադպիր , 6. Բ. Ատենադպիր և 7. Կահապահ-Մասնագարանապետ :

Գ. ՊԱՇՏՈՆԱՇՐՋԱՆԸ. — Վարչական Մարմինի պատճառավարութեան շրջանը մէկ տարի պիտի ըլլայ , Սեպտեմբերէ Սեպտեմբեր : Ընտրութիւնը կը կատարուի գաղտնի քուէով և իւրաքանչիւր անգամը՝ զատ զատ : Նոր Վարչական Մարմինը կ'ընտրուի ամեն տարի Սեպտեմբերի երրորդ շաբթուան վերջը : Նախորդ մարմինը արձակուրդի միջոցին և այլ պարագաներու տակ Շաւարշանի գոյքերուն ու գործաւնութիւններուն պատասխանատու է :

10. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ .— Վարչական Մարմինի պարտականութիւններն են .
1.) Առնուազն շարաթը անգամ մը նիսա գումարել՝ բնկերակցութիւնը բարեխաւ և նախանձելի վիճակի մը մէջ պահելու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար ,
2.) Առնուազն հինգ անդամներու ներկայութեամբ միայն խնդիր մը քուէարկել ,
3.) Հսկել Կանոնագրի ճշդիւ կիրարկումին և անդամներու գործունէութեան , 4.) Իր գրական բաժնի գործառնութիւններուն համար խորհրդակցիլ Աւսուցչական Կաճառի ներկայացուցչին հետ և 5.) Պատրաստել տարեկան տեղեկագիր ու հաշուեկշիռ :

ԵԱՆՈՒԹ .— Վարչական Մարմինի իւրաքանչիւր անդամը պարտաւոր է նիստերուն կանոնաւորապէս ներկայ գտնուիլ: Առանց բանաւոր պատճառի մէկ անգամէ աւելի բացակայող անդամ մը հրաժարած պիտի նկատուի :

— Եթէ Վարչական Մարմինի անդամներէն մէկը հրաժարի, տասնըհինգ օրուան մէջ պէտք է յաջորդն ընտրել :

11. ԻՐԱԽԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ .— Վարչական Մարմինի իրաւասութիւնները կը կազմեն՝ 1.) Վարել ընկերակցութեան բոլոր գործերը , յարաբերութիւն մշակել այլև այլ ուսանողական միութիւններու հետ , գումարել շարաթական հաւաքոյթներ և ընդհանուր ժողով և հսկել ելեմուտքին .

2.) Օրինագանց և անպատու արեր անդամ-
ները խրատելէ և իկարգ հրաւիրելէ վերջ ,
չուղղուելու պարագային՝ Ընդհ. ժողովի
մեծամասնութեան հաւանութեամբ անդա-
մակցութենէ զրկել , 3.) Քուէատու ան-
դամներու $\frac{2}{3}$ էն վաւերացուելու պայմա-
նաւ՝ Կանոնագրի յապաւումներ , յաւելում-
ներ կամ փոփոխութիւններ րնել . 4.) Ի
հարկին ընտրել ալիալլ յանձնախումբեր
(Վարիչ Մարմինէն կամ անկէ դուրս) , ա-
նոնց իրաւասութիւններն ու պատասխա-
նատուութիւնները գծել . և մանաւանդ րն-
տրել Գրական, Մարմնամարզական և Երա-
ժրշտական երեք երկսնդամ մնայուն յանձ-
նախումբեր՝ իր մէջէն , հետեւեալ պարտա-
կանութիւններուն համար :

ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ. — Գրական յանձնա-
խումբին պարտականութիւնն է՝ ա.) Շաւաղանի զը-
րական բաժնի զարգացման համար միջոցներ ստեղ-
ծել , բ.) Շարթական հաւաքոյթներու տարեկան
օրակարգը պատրաստել , գ.) Անդամներէն դուրս բա-
նախօսներ հրաւիրել՝ նախագահին միջոցաւ . և դ.)
Գրական մրցումներու պայմանները որոշել :

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ. — Մարմ-
նամարզական Յանձնախումբին պարտականութիւ-
նրն է՝ ա.) Կանոնագիր մը և տարեկան գօրծունէու-
թեան յատակագիծ մը պատրաստել , բ.) Ընտրել ե-
րեք խաղապետներ՝ Վարչական ժողովէն վաւերաց-
ուելու պայմանաւ , գ.) Խաղապետներուն հետ շա-
րթական նիստեր գումարել՝ մարմնամարզի զարկ

տալու միջոցներուն վրայ խորհրդակցելու, գանգատներ կամ բողոքներ լսելու կամ առկախ խնդիրներ կարգադրելու համար. դ.) Մարմնամարդական մըրցումներու սահմաններ որոշել և ե.) Իր նիստերուն արձանագրութիւնները պահել՝ Յանձնախումբին անդամներէն ստորագրուելէ և Շառաշանի կնիքով կրնաքուելէ վերջ պահուելու համար:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՄԲ. — Երաժշտական Յանձնախումբին պարտականութիւնն է՝ ա.) Տարեկան գործունէութեան ծրագիր մը պատրաստել, և բ.) Ընտրել երաժշտապետ մը, վարիչ նուագախումբին և երգիչ խումբին, որուն պիտի յանձնէ երաժշտութիւնը զարգացնելու մէջ գործնական բաժինը:

Այս ամեն յանձնախումբերը զատ զատ ուղղակի վարչ. Մարմինին պատասխանատու են:

12. ՆԱԽԱԳԱՀ. — Նախագահին պաշտօնն է՝ Ա.) Ամեն տեղ ընկերակցութիւնը ներկայացնել, Գրական, Մարմնամարդական և Երաժշտական յանձնախումբներու բնական նախագահ, իսկ ուրիշ դրուէ յանձնախումբի (բացի Գննիչ Յանձնախումբէն) ինչպէս նաև Խմբագրական Մարմնի բնական անդամ ճանչցուիլ, Բ.) Թէ՛ վարչական ժողովներու և թէ՛ ընկերակցութեան ընդհանուր ժողովներուն նախագահել, Գ.) Վերոժիշեալ մարմինները ի հարկին բացառիկ նիստերու հրաւիրել, Դ.) Շաբաթական հաւաքոյթներու մէջ վարչական Մարմնի հարկ տեսած որոշումները և անդամներու դիտո-

զութիւններն ու առաջարկները ի հարկին ընդհանուր ժողովին կողմէ վաւերացման ենթարկել, Ե.) Որեւէ նիստի մէջ պատշաճութեան սահմանէն չեզող անդամ մը ի կարգ հրաւիրել և անսաստուծի պարագային նիստէն վտարել զայն, Զ.) Որեւէ քուէարկութեան մէջ քուէներու հաւասարութեան պարագային միայն քուէ տալ :

13. ԴԵՐ-ՆԱ.ԽՍ.ԳԱ.Հ. — Դեր-Նախագահին պաշտօնը պիտի ըլլայ Նախագահի բացակայութեան պարագային ստանձնել անոր բոլոր պարտականութիւնները, պատասխանատուութիւններն ու իրաւասութիւնները :

14. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ. — Ընդհանուր Քարտուղարին պաշտօնը պիտի ըլլայ՝ Ա.) Թղթակցութիւնները կատարել, և Ուսանողական Միութիւններու հետ յարաբերութեան մտնել, Բ.) Եկող գացող թուղթերը մասնաւոր տոմարի մը մէջ արձանագրրել, Գ.) Ընդօրինակութեան և անդամակցութեանց տեսրակները պահել, Դ. Բոլոր թուղթերը կնքելէ վերջ նախագահին հետ ստորագրել, Ե.) Միութեանս մասնաւոր կրնիքը (Շաւարշան, Անաթոլիա Գողեճ, Մարզուան անունով) պահել :

ԾԱՆՈԹ. — Ընդհ. Քարտուղարը պարտի օժանդակ անդամներէ կամ ուրիշներէ եկած նամակներուն առաւելն երկու շարթուան ընթացքին մէջ պատասխանել :

15. Ա. ԱՏԵՆԱԴՊԻՐ. — Ա. Ատենադպիրին գործը պիտի ըլլայ՝ Ա.) Ընկերակցութեան հաւաքոյթներուն արձանագրութիւնները կազմել . Բ.) Ատենադրութեան ատարակը Նախագահին հետ ստորագրելէ յետոյ կնքել և պահել և Գ.) Ներկայութեան նայիլ :

16. Բ. ԱՏԵՆԱԴՊԻՐ. — Բ. Ատենադպիրին գործը պիտի ըլլայ՝ Ա.) Վարչական մարմինի ստենագրութիւնները կազմել . Բ.) Վարչական Մարմինի և կամ որեւէ Մասնուխումբի ծրագրած որեւէ գործի յայտագիրը կամ ցուցակները գրի առնել :

ԾԱՆՈԹ. — Ի բացակայութեան Ա. Ատենադպիրին Բ.ը պիտի ստանձնէ անոր պարտականութիւնները և փոխադարձաբար :

17. ԳԱՆՁԱՊԱՀ. — Գանձապահին պաշտօնն է, Ա.) Մասնաւոր հաշուեկառքի մը մէջ ընկերակցութեան հաշիւները պահել, Բ.) Առնելիքները գանձել և իր ու Նախագահին ստորագրութիւնները կրող ընկալագրերը տալ անոնց փոխարէնը, Գ.) Դրամ տալ միայն այն ատեն, երբ Նախագահին և ընդհանուր Քարտուղարին ստորագրութիւնը կրող թուղթ մը ներկայանայ իրեն, Դ.) Իրաւասութիւն չունենալ մէկ սակիէն աւելի գումար մը պահել իր քով (աւելորդը պարտի Գուէճի գանձապետին քով ի պահ գնել), Ե.) Առառաւելն մինչև Նոյեմբերի ա-

ուսջին չարախը Վարչական Մարմինին ներկայացնել տարեկան ընդհանուր պիւտձէ մը, որ ընդհանուր ժողովի վաւերացման պիտի ենթարկուի :

18. ԿԱՀԱՊԱՀ-ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԱՊԵՏ.—
Կահապահ-Մասնագործանապետին պաշտօնը պիտի ըլլայ՝ Ա.) Շաւարշանի ինչքերուն ամբողջական ցուցակը պատրաստել՝ հոն արձանագրելով զրքերը, թերթերը և պարբերականները, իրենց անունով ու քանակով, Բ.) Շարթուան որոշեալ ժամերուն մէջ Շաւարշանի անդամներուն գիրքեր ու թերթեր բաշխել, հսկելով անոնց մաքուր պահուելուն : Վնասուածներուն և կորսուածներուն համար՝ պատասխանատու պիտի ճանչցուի : Գ.) Գրքերը պիտի պահէ, անոնց գործածութեան պիտի հսկէ և ի հարկին զանոնք նորոգելու կամ նորեր ապրսպրելու համար Վարչական Մարմինին պիտի դիմէ :

Բ. ԹԵՐԹԻ ՊԱՇՏՈՆԷՆԻԹԻԻՆ.—

19. Թերթի պաշտօնէութիւնը պիտի բաղկանայ՝ Ա.) Արտօնատէր և Պատասխանատու անօրէնէ մը, Բ.) Խմբագրապետէ մը և երկու խմբագիրներէ, Գ.) Երեք հոգիէ բաղկացեալ Առաքմանց Յանձնախումբէ մը :

20. ԱՐՏՕՆԱՏԷՐ-ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏԸ-
ՆՕՐԷՆ. — Պիտի ընտրուի Ընդհ. Ժողովէն
և պիտի վաւերացուի կառավարութիւնէն :
Իր գործը պիտի ըլլայ թերթին ուղղութիւնը
համաձայնեցնել Մամուլի Կանոնադրին ար-
քամադրութեանց հետ, և Վարչական Մար-
մինի միջոցաւ պատասխանատու պիտի ըլ-
լայ Ընդհ. Ժողովին :

21. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. — Ընդհ. Ժողովը
պիտի ընտրէ Խմբագիր-Տնօրէն մը (Խմբա-
գրապետ) և երկու խմբագիրներ, որոնց
պաշտօնը պիտի ըլլայ, Ա.) Թերթին յարա-
բերութիւնն ու պայմանները ճշդօղ կանո-
նադիր մը պատրաստել, Բ.) Թերթին թրղ-
թակցութիւնները կատարել և Գ.) Արտօնա-
տիրոջ հետ յօդուածներն ընտրել ու գա-
սաւորել :

22. ԱՌԱՔՄԱՆՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ. —
Պաշտօն պիտի ունենայ թերթը տպարանէն
ստանալ և հսկել բաժանորդներու ձեռքը
կանոնաւորապէս հասցնելու վերաբերեալ
գործառնութեանց : Առաքմանց Յանձնա-
խումբը կ'ընտրուի Խմբագրութեան կողմէ :

23. Թերթի պաշտօնէութեան չրջանը պի-
տի ըլլայ մէկ տարի, ընտրուելով Գեկակեմ-
բերի վերջին շաբթուն : Վարիչ Մարմնի մի-
ջոցաւ պատասխանատու պիտի ըլլայ Ընդհ.
Ժողովին :

24. Վարիչ Մարմնի անդամ մը կրնայ սոյն պաշտօնէութեան մասնակցիկ և փոխադարձաբար :

IV

ՔՆՆԻՋ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

25. Չտակուան արձակուրդէն վերջ, առաջին շաբաթ օրը, Ընդհ. Ժողովը պիտի ընտրէ երեք հոգիէ բազկացեալ Քննիչ Յանձնախումբ մը, որ առառաւելն մինչև վեց շաբաթ Վարչութեան գործունէութիւնը մանրակրկիտ քննութենէ մը անցնելէ վերջ՝ տեղեկագիր մը պիտի պատրաստէ : Այս տեղեկագիրը պիտի ներկայացուի Վարչ. Մարմինին, անոր իւրաքանչիւր անդամէն ըստօրագրելու համար, և յետոյ Ընդհ. Ժողովին վաւերացման ենթարկուելով՝ պիտի պահուի :

ԾԱՆՈԹ.— Վարչ. Մարմնի ստորագրութեան մերժման պարագային եթէ Ընդհ. Ժողովի քուէն աննըպատար ըլլայ Վարչ. Մարմնին, նոր Վարչութիւն պիտի ընտրուի. իսկ եթէ աննպատար ըլլայ Քննիչ Յանձնախումբին և այս վերջինը պնդէ իր համոզումներուն վրայ՝ նորընտիր Քննիչ Յանձնախումբի մը կողմէ մէկ շաբթուան մէջ Վարչական Մարմնի հետ համաձայնութեամբ տեղեկագրին վիճելի կէտերը բարեփոխուելով կրկին պիտի ենթարկուի Ընդհ. Ժողովի հաւանութեան :

V

ԵԼԵԻՍՈՒՏՔ

26. Ընկերակցութեան եկամուտները պիտի կազմեն, Ա.) Գործօն և օժանդակ անդամներու վճարումները, Բ.) Ներկայացումներէ և նուազահանդէսներէ գոյացած հասոյթ, Գ.) թերթին բաժանորդագրութիւնները, Դ.) Զանազան ձեռնարկներու հասոյթներ (քարակերու, շքանշաններու և գրքոյկներու վաճառում եւն.) և Ե.) նրւէրներ :

ԾԱՆՈԹ.— Նուիրահաւաքութիւն կարելի է միայն վարչական Մարմինի որոշմամբ :

27. Տարեկան ամբողջ եկամուտին սու նրւազն հարիւրին քսանը (20⁰/₀) պիտի բարգուռի ընկերակցութեան անձեռնմխելի գրամագլուխին վրայ :

28. Պիւտճէն (զանազան նպատակներու համար յատկացուելիք գումարները) Ընդհ. Ժողովէն վաւերացուելէն վերջ պիտի գործադրուի :

ԾԱՆՈԹ.— Առանց Ընդհ. Ժողովի մասնաւոր արտօնութեան, ընկերութեան դրամը իր նպատակէն զատ ուրիշ որեւէ բանի չկրնար յատկացուիլ :

VI

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

29. Ընկերակցութեան գործերը պիտի սկսին Սեպտեմբերի երրորդ շաբթուն և պի-

տի տեւեն մինչև Յունիսի առաջին տասնեակը (Ը. Ե.) :

ԾԱՆՈԹ. — Արձակուրդներու միջոցին կանոնաւոր հաւաքոյթ չպիտի ըլլայ :

30. Գոց քուէարկութեան համար ընկերութեան կնիքը կրող թուղթեր պիտի բաժնուրէին . այս թուղթերը թէ՛ բաժնուելէ առաջ և թէ՛ վերջը՝ պիտի համրուին :

31. Որեւէ պաշտօնի թեկնածու մը ընտրուած կը համարուի, երբ ներկաներու պարզ մեծամասնութեամբ ընտրուի : Համեմատականի քուէարկութիւնը կը կատարուի ամենէն շատ քուէ ստացող յաջորդ երկու թեկնածուներու (և կամ երեք և աւելի՝ եթէ հաւասար քուէ առած են) վրայ :

32. Ընդհ. Ժողովը սրեւէ քուէարկութեան կրնայ ձեռնարկել՝ ամբողջ քուէատու անդամներուն մեծամասնութեան ներկայութեամբ միայն :

33. Ամեն տարի Դեկտեմբերի վերջին շաբթուն վարչական Մարմինէն ընտրուած երեք հայ դասատուներու Յանձնախումբը գրական և ճարտասանական մրցումներու նիւթերը և ապա շահողները պիտի որոշէ : Մրցանակները պիտի բաշխուին Մայիսի վերջերը տեղի ունենալիք ընկերակցութեան տարեկան վերջին երեկոյթին մէջ :

34. Ընկերակցութեան մէկ կամ աւելի
ոսկի նուիրողներ՝ Նուիրատու, իսկ հինգ
կամ աւելի ոսկի նուիրողներ ՇԱ.Ի.Ս.ՐՇԱ.
Նի թարերար պիտի կոչուին, և իրենց ա-
նունները ընկերութեան անդամակցութեան
տետրակին մէջ պիտի արձանագրուին իբր
այն :

35. Այս կանոնագրին որեւէ մէկ յօդու-
ածը կրնայ ջնջուիլ կամ բարեփոխուիլ՝ իր-
ւեատու անբողջ անդամներու երկու երրորդին
հաւանութեամբ միայն:



20839

**ՇԱԽԱՐՇԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՇԱԽԱՐՇԱՆ Ռուսանդական Միութիւնը իր գործունեութեան ընթացքին ունեցած է հրատարակչական ճիւղ մ'աչ, որ հանրութեան նուիրած է պարբերական մը եւ հիմնած է մասնաւոր մը:

Շաւարշանի հրատարակութիւններն են հետևեալները.

1. ՆՈՐ ԱՅԳ.— Հաւնուած եւ ամեն կողմէ գնահատուած ամսաթերթ մը՝ Գրական, Գիտական եւ Բանասիրական բովանդակութեամբ, որուն կ'աշխատակցին յայտնի դեմքեր: Բաժնեգին՝ 20 դր: Հասցե՝ Խմբագրութիւն Նոր Այգի, Անարդիա Գոյեմ-Մարզուան.
2. ԲՈՒԷՐԱ.— Այս համաձայրակին եւ անկէ փոխելու միջոցներուն վրայ խօսող օգտակար ժողովրդական տեսակ մը: Գրեց՝ Տօգր. Յ. Խ. Արշալան, 1910 Մարզուան: Գին՝ 1 դր:
3. ԾՆՈՂԱԶՈՒԻԳ.— Գողթիկ Գերմանական վեպ մը, քարգնանուած Բրոգ. Գ. Յ. Կիւրիանէ: 1911, Մարզուան: Գին՝ 3 դր:
4. ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ.— «ՇԱԽԱՐՇԱՆ» Ռուսանդական Միութեան նպատակն ու ուղղութիւնը քատարող տեսակ մը: